

## ՖՐԱՆՉԻՍԿՈՍ ԴԱՊԸ ԸՆԴՈՒՆԵՅՑ ՍՈՒՐԻԱԿԱՆ ԱՐԱԲԱԿԱՆ ԿԱՐՄԻՐ ՄԱՀԻԿ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ՏՆՕՐԷՆԸ

Վատիկանի մեջ Ֆրանչիսկոս Պապը ընդունեց Սուրիական Արաբական Կարմիր Մահիկ Կազմակերպության տնօրեն, երկրչփ. Խալեո Ջըպուպաթին:

31 Յունուարին տեղի ունեցած այս հանդիպումին ընթացքին Ջըպուպաթի շնորհակալութիւն յայտնեց Պապին ընդունելութեան համար, ապա ներկայացուց Սուրիոյ տագնապին լոյսին տակ ժողովուրդին ծանր վիճակը, յայտնելով, որ Սուրիոյ մէջ միլիոնաւոր քաղաքացիներ կարողութիւն չունին ապրուստի հիմնական իրենց կարիքները ապահովելու: Ան աւելցուց, որ մարդասիրական օժանդակութիւններու կարիքը կ'աւելնայ այնքան ատեն, որ տնտեսական տագնապը կը սաստկանայ՝ Սուրիոյ դէմ պարտադրուած տնտեսական պատժամիջոցներուն հետեւանքով, յատկապէս ձմրան ցուրտ եղանակին լոյսին տակ: Զանդիպումին աւարտին, Պապը շեշտեց, որ Սուրիան իր աղօթքներուն մէջ կը յիշէ, ինչպէս ինքնակալէն, որ Սուրիան դառնայ իր խաղաղ ու բարգաւաճ օրերուն: Պապը յայտնեց նաեւ Սուրիա կրկին այցելելու իր բուն փափաքը:



Յիշենք, որ Ջըպուպաթի Ռոմա տուած իր այցելութեան ընթացքին հանդիպումներ ունեցաւ նաեւ Կարմիր Խաչի Կարմիր Մահիկ Միջազգային կազմակերպութեանց նախագահ Ֆրանչեսքո Ռոքքայի եւ մարդասիրական կազմակերպութիւններու ներկայացուցիչներու հետ:

Սուրիական Արաբական Կարմիր Մահիկ Կազմակերպութեան տնօրեն Խալեո Ջըպուպաթի ընդունեց Սուրիական Արաբական Կարմիր Մահիկ Կազմակերպութեան տնօրեն Խալեո Ջըպուպաթին:

## ՓԱՇԻՆԵԱՆ-ՓՈՒԹԻՆ ՇԵՆՈՒՄԱՅԻՆԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՅՈՒԹԻՒՆ

Յայաստանի Յանրապետութեան վարչապետ Նիկոլ Փաշինեան հեռաձայնային հաղորդակցութիւն ունեցած է Ռուսիոյ նախագահ Վլատիմիր Փութինի հետ:

Փաշինեան անդրադարձած է Ատրպէյճանի կողմէ Բերձորի միջանցքի ապօրինի շրջափակման պատճառով Լեռնային Ղարաբաղի մէջ ստեղծուած մարդասիրական ճգնաժամին եւ կարելի է նկատուած անոր յաղթահարման համար Ռուսիոյ կողմէ անհրաժեշտ քայլերու որդեգրումը:



Այս շրջագիծին մէջ անդրադարձ կատարուած է Լեռնային Ղարաբաղի մէջ Ռուսիոյ խաղաղապահ առաքելութեան գործունեութեան:

Չրուցակիցները քննարկած են 9 Նոյեմբեր 2020-ին, 11 Յունուար, 26 Նոյեմբեր 2021-ին եւ 31 Դեկտեմբեր 2022-ին ստորագրուած Յայաստանի, Ռուսիոյ եւ Ատրպէյճանի դեկլարներու եռակողմ համաձայնութիւններու իրականացման առնչուող հարցեր:

Միտքեր փոխանակուած են նաեւ հայ-ռուսական համագործակցութեան օրակարգային այլ հարցերու շուրջ:

## ՍՈՍՏՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆ ՀԱՅՐԸ ՄԵԿՆԵՅԱՒ ԼԻԲԱՆԱՆ, ՈՐՄԷ ԵՏԶ ԴԻՏԻ ՈՒՂՂՈՒ ԵԳԻՊՏՈՍ

Բերիոյ Յայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Տ. Մակար Սրբ. Եպս. Ազգարեան մեկնեցաւ Լիբանան, որմէ ետք պիտի ուղղուի Եգիպտոս՝ մասնակցելու Արեւելեան Ուղղափառ եկեղեցիներու եւ Կաթողիկէ եկեղեցւոյ միջեւ աստուածաբանական երկխօսութեան 19-րդ լիակատար ժողովին:

Սրբազան հայրը անդամ է միջազգային յանձնաժողովի միացեալ յանձնախումբին եւ կը ներկայացնէ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը:

Լիակատար ժողովը տեղի պիտի ունենայ Եգիպտոս՝ Ռուստի ալ-Նաթրունի «ԼՈՎՈՍ» կեդրոնին մէջ, 30 Յունուար 2023-էն մինչեւ 5 Փետրուար 2023 օրերու ընթացքին:



## ԱՐՅԱՆԻ ՇՐՋԱՓԱԿՈՒՄԸ 52-ՐԴ ՕՐԸ ԹԵՎԱՌՈՒՅՑ

Երեքշաբթի, 31 Յունուարը Արցախի կառավարութեան տեղեկագիրին համաձայն Արցախի շրջափակման 52-րդ օրն էր:

Շրջափակման հետեւանքով կենցաղային տագնապալի վիճակը կը շարունակուի: Ելեկտրական հոսանքը օրական 6 ժամով կ'անջատուի, մթերքի հիմնական տեսակները կտրուով կը վաճառուին, առկայ է դեղորայքի պակաս: Կազմատակարարումը թէեւ վերականգնած է, բայց ուժանիւթի համակարգի մեծ ծանրաբեռնութեան պատճառով կազ ունին միայն Ստեփանա-



կերտի բնակիչները: Նախանցեալ օր դասաւանդումի հոլովոյթը թէեւ վերականգնած է, բայց մանկապարտէզները կը շարունակեն փակ մնալ:

31 Յունուարին, կառավարութեան գործադիր շտապի Նիստին յայտարարուած է որ կտրուային համակարգի ներդրումը որոշակի չափով մեղմացուցած է պարենային խնդիրը Արցախի մէջ, սակայն շրջափակման հետեւանքով բնակչութիւնը կը շարունակէ գրկուած մնալ շարք մը կարելիոր ապրանքատեսակներ ձեռք բերելու կարելիութենէ:

Ինչ կը վերաբերի պենզինի եւ վառելիքի շուկային մէջ առկայ իրավիճակին, ապա զեկուցուած է, որ առկայ է պաշարներու սղութիւն եւ կարելի է նկատուած է խիստ խնայողական դրութեան պահպանումը:



Նիստի ընթացքին քննարկուած են նաեւ գարնան գիւղատնտեսական աշխատանքներու նախապատրաստական եւ գարնանացանի կազմակերպման հարցեր:

Նոյն օրը, Արցախի շտապը յայտարարած է որ Կարմիր խաչի միջնորդութեամբ 19 մարդ Արցախէն տեղափոխուած է Յայաստան՝ ընտանիքներուն վերամիանալու համար:

Արցախէն Յայաստան հիւանդներու եւ շրջափակման պատճառով ընտանիքներէն կտրուած անձերուն տեղափոխումը կը շարունակէ իրականացուիլ բացառապէս Կարմիր Խաչ միջազգային կոմիտէի միջնորդութեամբ եւ ուղեկցութեամբ:

Նշենք, որ շրջափակման 48-րդ օրը 47 օր շարունակ իրենց ընտանիքներէն հեռու մնացած մանուկները տուն՝ Արցախ, վերադարձած են Կարմիր Խաչի միջնորդութեամբ:

Արցախի պետական նախարար, գործնական շտապի պետ Ռուբէն Վարդանեան Ստեփանակերտի տարբեր թաղամասերու մէջ հանդիպումներ ունեցած է բնակչութեան հետ:

Անցեալ շաբթուան ընթացքին համայնքներու, Ստեփանակերտի մէջ հանրային հանդիպումներու ընթացքին Ռուբէն Վարդանեան խօսած է այն մարտահրաւերներուն եւ հարցերուն մասին, որոնց պետութիւնն ու հասարակութիւնը կ'աւերտուին ատրպէյճանական շրջափակման հետեւանքով:

Զանդիպումներուն մասնակիցները վստահեցուցած են, որ ոչ մէկ շրջափակում չի կրնար կտրել հայրենի հողին վրայ իրենց արժանապատիւ կեանքը շարունակելու հաստատակամութիւնը:

## Տեղական Լրագրող

### Խմբագրական

#### ԲԵՐՁՈՐԻ ՄԻՋԱՆՑՔԻ ՇՐՋԱՓՎԱԿՈՒՄԸ ԿՐՆԱՅ ԱՐՑԱԽԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱԶՄԱՆ ԵՆԹԱՅՈՐԴԻ ՎԵՐԱԾՈՒՄ

Բերձորի միջանցքի շրջափակումին հետեւանքով հայկական կողմին ջանքերը՝ միջազգային ընտանիքին դիմաց մերկացնելու Ատրպեյճանի Արցախը հայաթափելու իսկական նպատակը, սկսան արձագանգ գտնել:

Եւրոխորհրդարանի մէջ Ատրպեյճանի քայլերը քողագերծող վերջին ելոյթները, նոյնպէս Լաիսի մարդու իրաւունքներու միջազգային դատարանին մէջ հնչող հակաատրպեյճանական ելոյթներն ու ատրպեյճանական անհիմն ինքնապաշտպանական փորձերը առիթ հանդիսացան Արցախի ոչ միայն մարդկային վիճակի միջազգայնացման, այլեւ քաղաքական կարգավիճակին շուրջ տարիներու պայքարի օրինականութեան յստակեցման:

Նպատակային էր հայկական ե՛ւ պետական, ե՛ւ սփիւռքահայ կողմերու, յատկապէս Հայ Դատի գրասենեակներու դիւսաքարոզչական աշխատանքներուն մէջ հետեւեալ հարցերուն շեշտադրումը.

-Արցախի շրջափակումը նախ եւ առաջ մարդկային կեանքին սպառնալիք է, ցեղային ոչնչացման, իմա՝ Արցախի հայաթափման միտող քայլ, ինչ որ կը հաստատէ, թէ Արցախը, Խորհրդային Միութեան փլուզումէն ետք, այլ երկիրներու անկախացման ձգտումին համահաւասար իրաւունքով արտայայտած ու հանրաքուէով օրինականացուցած է անկախ ապրելու իր իրաւունքը, ուստի ան երբեք չի կրնար միանալ Ատրպեյճանի կազմին:

- Յաճախ խաղաղութեան լեզուով հանդէս եկող Ատրպեյճան կրկին հաստատած է ուժի սպառնալիքին դիմելու իր վարքագիծը, ժողովուրդ մը ամբողջ մատնելով սովի, երիտասարդներն ու մանուկները գրկելով իրենց ծնողներէն, ուսումնակրթական կեանքէն եւ վերջապէս առողջապահական ոլորտի ճգնաժամ ստեղծելով:

-Հակառակ միջազգային տարբեր կողմերու, ԱՄՆ-ի, Եւրոպայի, Ռուսիոյ, կրօնական միջազգային դէմքերու կոչերուն, Ատրպեյճան անտեսած է միջազգային ընտանիքը ու կը շարունակէ շրջափակման մէջ պահել Արցախի բնիկ ժողովուրդը:

Արցախի եւ Հայաստանի աշխարհաքաղաքական դիրքն ու գերաւորութիւններու Հարաւային Կովկաս թափանցելու ճիգերը Արցախի շրջափակման հարցին կու տան շատ անելի օրակարգային կարեւորութիւն, ինչ որ կրնայ, հայկական կողմին ճիգերուն բազմապատկումին պարագային, Ատրպեյճանը ստիպել շարք մը զիջումներու:

Պատահական չէ, որ Ատրպեյճանի նախագահը կը դիմէ եւրոպական երկիրները կազմի իր պաշարներով շլացնելու քայլին, երբ Հունգարիա իր այցելութեան առիթով օրեր առաջ կը յայտարարէ, թէ Ատրպեյճան բաւականաչափ կազ ունի բաւարարելու Եւրոպայի կարիքները՝ որպէս վստահելի մատակարար յառաջիկայ հարիւր տարուան ընթացքին: Դար մը ամբողջ Եւրոպան մատակարարելու խոստումը արդէն ինքնին թեական կը թուի, եթէ նկատի ունենանք որ խօսքը բնութեան պաշարներու մասին է եւ ոչ թէ նիւթական շօշափելի հարստութեան:

Ատրպեյճանի սպառնալիքները չեն երաշխաւորեր տարածաշրջանի խաղաղութեան հաստատումը, ինչ որ բխրուն կը դարձնէ անգամ Ատրպեյճանի տարածքներէն արտածումները տարածաշրջանի լարուածութեան սրման պարագային:

Արցախի ժողովուրդին դիմադրողականութիւնը սկսած է արդիւնաւորուիլ: Կը մնայ տոկալ, կառչած մնալ հողին, որովհետեւ հողն ու հայրենիքը միայն երկարաշունչ պայքարով կարելի է պահել:

Եթէ մեր ժողովուրդը յաջողի կառչած մնալ հողին, կը ձախողին Ատրպեյճանի բնապահպանման եւ այլ կեղծ ծրագիրները բնականաբար, ու Արցախի հարցի միջազգային արծարծման նշանոցները կրնան ուղղուիլ Արցախի միջազգային ճանաչման:

44-օրեայ պատերազմով Ատրպեյճան ջանաց հայաթափել ամբողջ Արցախը, սակայն չյաջողեցաւ՝ ունենալով մէկտեղ զինուորական անսահման աջակցութիւնը Թուրքիոյ: Ատրպեյճանի շարունակուող յարձակողապաշտութիւնը կը բախի արցախահայութեան անկտրում կամքին:

Ուստի Արցախի դիմացկուն ժողովուրդին տարբեր միջոցներով աջակցութիւնը համայն հայութեան ազգային պարտքը կը համարուի այս օրերուն:

«Գ.»

-Ռուսիոյ արտաքին գործոց նախարար Սերկէյ Լաւրով մամլոյ ասուլիսի մը ընթացքին յայտնեց, որ սկզբնականօրէն համաձայնած են, որ Իրան մաս կազմէ ռուսական-սուրիական-թրքական եռակի հաղորդակցութեան: Լաւրով անեցուց. «Տրամաբանականօրէն, սուրիական-թրքական յարաբերութեան կարգաւորման շուրջ բանակցութիւնները պէտք է տեղի ունենան Ռուսիոյ եւ Իրանի միջնորդութեամբ»:




-Սուրիոյ Առողջապահութեան նախարար տոքթ. Հասան Ղապպաշ Ժընեյի մէջ Համաշխարհային Առողջապահութեան Կազմակերպութեան գործադիր Խորհուրդի 152-րդ շրջանի ժողովին ընթացքին արտասանելով Սուրիոյ Հանրապետութեան խօսքը ըսաւ. «Սուրիոյ ժողովուրդին վրայ բանեցուած տնտեսական պատժամիջոցները, յատկապէս սուրիական պետական հիւանդանոցներուն, որոնք անվճար բժշկական ծառայութիւն կը տրամադրեն ժողովուրդին, պատժամիջոցներու ցանկին անջնջելը պատճառ դարձաւ, որ բժշկական սարքաւորումներ ու բուժման եւ հիւանդութիւններու ախտաճանաչման պիտոյքներ չհասնին այդ հիւանդանոցներուն»:



Նախարար Ղապպաշ կոչ ուղղեց խորհուրդին Սուրիոյ տնտեսական պատժամիջոցներու չեղեալ համարումը պահանջելու, ինչպէս նաեւ տալու Պաղեստինի եւ Կուլանի ժողովուրդներուն դէմ ի գործ դրուած Իսրայէլի ոճրագործութիւններուն:

-Սուրիոյ Նախարարներու Խորհուրդը իր հերթական նիստին ընթացքին յայտնեց, որ սուրիական նահանգներուն մէջ էլեկտրականութեան արտադրման բարելաւման միջոցներ կ'ուսումնասիրէ, ինչ որ դրական ազդեցութիւն պիտի ունենայ երկրի ընդհանուր էլեկտրականութեան իրավիճակին վրայ, որուն գուցահեռ պիտի շարունակուի Ղամասկոսի Տեր Ալի, Հալէպի, եւ Լաթաքիոյ Ռաստան էլեկտրածին կայաններուն վերանորոգման աշխատանքները:



-Սուրիոյ Կեդրոնական Դրամատունը հաղորդագրութեամբ յայտարարեց, որ 1 Յունիս 2020-ին հրապարակուած 17/961 թուակիր օրէնքը՝ սուրիական նահանգներուն միջեւ արտօնուած գումարի փոխադրութեան վերաբերեալ, բարեփոխութեան պիտի ենթարկուի: Դրամատան յայտարարած բարեփոխութեան համաձայն, սուրիական նահանգներուն միջեւ փոխադրութեան ընթացքին, ճամբորդին կ'արտօնուի առաւելագոյնը 15 միլիոն ս.ո. կրել: Դրամատունը անեցուց, որ Դրամասկոս-Դրամասկոսի Արուարձան եւ Քունայթիքա նահանգներուն միջեւ դրամ փոխադրելը գերծ կացուցուած է վերոյիշեալ օրէնքէն:



-Հալէպի նահանգապետ Հունէյն Տիսայ յայտնեց որ տարեկից քանակ հարկէ անւններու, քաղաքներու եւ արուարձաններու ծառայողական ոլորտի ձեռնարկներու իրականացման ծրագիր մշակել, համաձայն առաջնահերթութիւններու: Ծրագիրին նպատակը պիտի ըլլայ խրախուսել տնտեսական եւ ընկերային ոլորտի աշխատանքները՝ վերականգնումի ընդհանուր շրջագիծին մէջ:



Տիսայ Չորեքշաբթի, 1 Փետրուարին նահանգային խորհուրդի վարչական մարմիններու հետ հանդիպման ընթացքին կարեւոր համարեց օգտագործել կարելի բոլոր միջոցները ծառայողական ոլորտը բարելաւելու, ինչպէս նաեւ պետութեան կողմէ հովանաւորուող աշխատանքներուն կողքին թափ տալու կամաւոր աշխատանքի խումբերու յառաջացման, որպէսզի անոնք մասնակից դառնան ճամբաներու նորոգութեան, լուսաւորման, մաքրութեան եւ բարեկարգման աշխատանքներուն:











Թարգմանական Անկիւն

ԴԱՇՆԱՄՈՒՐ

Ուկրինացի Սարգիսի Անգլերէն թարգմանեց Չարմիկ Պողիկեան

Ամէն դաշնամուր տեսնելուս կը յուզուիմ, - ըսաւ Պէն:

- Իսկապէ՞ս, - հարցուց Էմմա, - ինչո՞ւ:

- Ի՞նչ գիտեմ, - պատասխանեց Պէն, - կ'ուզե՞ս մտնենք այս վաճառատունն ու փորձենք անկիւնի փոքր դաշնամուրը:

- Նուագել գիտե՞ս, - հարցուց Էմմա:

- Եթէ ըրածս նուագել համարես, - պատասխանեց Պէն:

- Ի՞նչ է մասնագիտութիւնդ:

- Հիմա կը տեսնես, - ըսաւ Պէն:

Անոնք վաճառատուն մտան եւ ուղղութեան դէպի անկիւնի փոքր դաշնամուրը: Յանկարծ Էմման նշմարեց, որ Պէն կը ժպտի ու գարմացաւ նկատելով որ շատ բան չէր գիտեր իր մասին: Ան խորհած էր թէ ճանչցած էր զինք, բայց այդ պահուն հակառակը պարզ ուեցաւ: Պէն դաշնամուրին գլուխը անցաւ եւ ուշադրութեամբ գննեց գործիքը:

«Հաւանաբար Պէն դաշնամուրային լաւ կատարում մը լսած ու այնքան տպաւորուած էր, որ ամէն ստեղծագործ կամ դաշնամուրի նման գործիք մը տեսնելուն կը վերոյիշէր այդ երաժշտութիւնն ու նուագելու անդիմադրելի փափաք մը կ'արթննար մէջը»:

Խորհեցաւ Էմմա:

- Նուագել գիտե՞ս, - կրկին հարցուց Պէնին:

Պէն ակնարկ մը նետեց չորս դին, վաճառատան պաշտօնէտները զբաղած կ'երեւէին:

- Չեմ գիտեր, - եղաւ պատասխանը կրկին: Էմման նկատեց, որ Պէնի ձեռքերը հանդար-

- Իմ կարծիքով հիանալի կատարում է, - հաստատեց Էմման:

- Նուագելուս չէ որ կ'ակնարկեմ, - նկատել տուաւ Պէն, - դաշնամուրը ըսել կ'ուզեմ: Այս դաշնամուրը, հակառակ փոքր ըլլալուն, լաւ հնչեղութիւն ունի:

Այդ պահուն միջին տարիքի պաշտօնէտ մը մօտեցաւ իրենց:

- Բարե՛ւ:

- Բարե՛ւ, - ըսաւ Պէն, - հոյակապ դաշնամուր է:

- Շատ պահանջուած գործիք է, - ըսաւ պաշտօնէտն, - յատկապէս բնակարաններու համար: Բաւական ծախեցիք այս տեսակէն:

- Ինչքա՞ն կ'արժէ, - հարցուց Պէն:

Երկու հարիւր քառասունհինգ-յիսուն, - պատասխանեց, - կրնաք ամսական մասնավճարներով ալ մուծել անշուշտ:

- Ո՞ր պատրաստուած է, - հարցուց Պէն:

- Ֆիլատելֆիա կ'ենթադրեմ, բայց վստահ չեմ, կրնամ ստուգել:

- Հարց չէ, - ըսաւ Պէն:

- Կը նուագե՞ք:

- Ո՛հ, նուագել չեմ գիտեր, - պատասխանեց Պէն:


- Շատ փնտռուած գործիք է, - անցուց պաշտօնէտն, - անշուշտ կրնանք համաձայնիլ պայմաններուն շուրջ:

Ան նկատեց, որ Պէն կ'ուզէր քիչ մըն ալ փորձել:

տասխանեց Պէն, - ժամեր կը նստէի այս դաշնամուրին դիմաց:

- Հարց չէ, քիչ մըն ալ նուագեցէ՛ք, - կրկնեց պաշտօնէտն, - ոչ ոք ուշադրութիւն կը դարձնէ ձեզի:

Վաճառողը մօտեցուց աթոռը: Պէն նստաւ ու սկսաւ ընել այն ինչ նուագել իսկ չէր համարած: Քանի մը երկվայրկեան փորձեր ըրաւ, ապա շուրջ երկու վայրկեան մեղեդիի նման կտոր մը



նուագեց: Երաժշտութիւնը անելի մեղմ ու մելամաղձոտ անարտին հասաւ, իսկ Պէն անելի ու անելի հմայուեցաւ դաշնամուրով: Յետոյ յանկարծ դարդեցուց նուագը եւ ոտքի ելաւ:

- Շնորհակալութիւն, - ըսաւ, - երանի կարեւորային գնել...:

- Հոգ չէ, - անցուց պաշտօնէտն: Պէնն ու Էմման վաճառատունէն դուրս ելան: Երբ կը քալէին Էմման ըսաւ.

- Տեղեակ չէի, Պէն:

- Ինչէ՞ն, - հարցուց Պէն:

- Քեզ մէ:

- Ինձ մէ՞:

- Այսպիսի ծիրք ունենալէդ:

- Աղէկ, ճաշի ժամն է արդէն: Երեկոները յաճախ կը մտածեմ, թէ ինչ լաւ կ'ըլլար եթէ դաշնամուր մը ունենայի:

Անոնք փոքր ճաշարան մը մտան, տեղաւորութեան պատուէրներ ընդունողին մօտ ու երկու ակրատ, երկու գաւաթ ալ սուրճ ապսպրեցին:

- Ե՞րբ սորված ես նուագել, - զարմանքով հարցուց Էմման:

- Բնաւ չեմ սորված, - պատասխանեց Պէն, - ուր որ դաշնամուր գտնեմ, կը փորձեմ նուագել: Այդպէս կ'ընէի պատանութեանս օրերէն: Ու հայեացքը ուղղելով Էմմային ժպտեցաւ այնպէս ինչպէս կը ժպտէր երբ դաշնամուրին դիմաց կանգնած ստեղծագործին կը նայէր:

Էմման շոյուած զգաց:

- Եթէ դրամ չունիս, - ըսաւ Պէն, - իրաւունքդ համարուող շատ մը բաներ կը գրկուիս:

- Այդպէս է, - անցուց Էմման:

- Ասիկա մէկ կողմէն լաւ է, - շարունակեց Պէն, - միւս կողմէն, սակայն, այնքան ալ լաւ չէ... իրականութեան մէջ՝ սարսափելի է:

Պէն կրկին նոյն խանդաղատանքով նայեցաւ Էմմային, Էմման ալ նոյն շերմ ժպտող փոխանակեց ու ըմբռնեց, որ պահը դաշնամուրին հետ Պէնի հանդիպումի պահուն կը նմանէր ու Պէն նոյնքան հաճոյքով երկար ժամեր կրնար մնալ իր կողքին... Էմմային հոգին շերմ զգացումներով պարուրուեցաւ:

Քիչ վերջ անոնք դուրս ելան ճաշարանէն, քալեցին երկու թաղ եւ ուղղութեան Էմմային աշխատավայրը:

- Աղէկ, ցտեսութիւն, - ըսաւ Պէն:

- Տեսութիւն, - պատասխանեց Էմման:

Պէն իջաւ փողոցն ի վար, իսկ Էմման անցաւ իր գործին: Ան համոզուած էր, որ Պէն օր մը անպայման պիտի ունենար դաշնամուր մը եւ այն ամէնը ինչ կը փափաքէր ունենալ:



տօրէն կը սահին սեւ ու սպիտակ ստեղներուն վրայ, յար եւ նման հմուտ դաշնակահարի մը ձեռքերուն, ինչ որ շատ անսովոր թուեցաւ իրեն: Ան իսկոյն կռահեց, որ կողքը կանգնած է անձ մը, որ երկար ատեն կը փորձէ ինքզինք արտայայտել, հաւանաբար ուրիշ մը շատ անելի երկար ժամանակի պիտի կարօտէր զինք ճանչնալու համար: Պէն նուագել գիտցող մըն էր անպայման...:

Պէն քանի մը մեղմ աքորտ նուագեց: Ոչ ոք մօտեցաւ բան մը վաճառելու իրեն: Ուստի, դաշնամուրին դիմաց կանգնած մնալով սկսաւ ընել այն ինչ որ նուագել իսկ չէր համարած...:

Էմման պարզապէս հմայուած էր:

Պէն ընդամենը կէս վայրկեան նուագեց, ետքը նայուածքը Էմմային ուղղելով ըսաւ.

- Գեղեցիկ կը հնչէ:

- Մօտեցէ՛ք, - ըսաւ, - քիչ մըն ալ փորձեցէ՛ք:

- Նուագել չեմ գիտեր, - կրկնեց Պէն:

- Բայց լսեցի ձեր կատարումը, - նկատել տուաւ պաշտօնէտն:

- Այս ալ կատարում կը համարեք, - պատասխանեց Պէն, - ես ձայնանիշ մ'իսկ կարդալ չեմ գիտեր:

- Բայց ինձի հաճելի թուեցաւ, - պատասխանեց պաշտօնէտն:

- Ինձի ալ, - անցուց Էմման, - որքա՞ն է առաջին մասնավճարը:

- Օ՞հ, ընդամենը քառասուն, յիսուն տոլար, - ըսաւ պաշտօնէտն ու Պէնին մօտենալով կրկնեց, - բան մը նուագեցէ՛ք, ինչպէս, կ'ուզեմ ձեր կատարումը վայելել:

- Եթէ յարմար սրահի մը մէջ ըլլայինք, - պա-



## ԸՆԹԵՐՑԱԳՐՈՒԹԻՒՆ



Խաչիկ Տեր Ղուկասեան

Ոչ-ԻՐ(ական)  
«Յետեւաբար ի՞նչ ընել. գրկուի՞նք գեղեցիկ իրերու վայելքէն, թե՞ կառչիլ անոնց»: (Մարուշ Երամեան, Իրերը եւ Մենք, «Գանձասար» 2. 26 Յունուար 2023)

Համոզուած էր, որ ճամբորդի մը համար հիմնականը «ձգածիս ընդմիջտ» իմաստութիւնն էր, որուն համար անհրաժեշտ էր ըլլալ «ճամբորդ մ'աղքատ»: Բաւ էր անցագիրը, քրեանք քարոզելու քիչալիկը: Թերեւս շուտով՝ միայն քիչալիկը որով եւ պիտի կարելիանայ սահմանազան գործողութիւնը, ամեն սահմանազերծումի եւ սահմանագծումի խորթ ինչ որ վայր մը՝ ֆիզիքապէս անհասանելի:



Մարք Օժէ (Marc Augé) կարդացած եւ. երբ հաւաքական բանականութիւնը (General Intellect) «թեթեւացած» էր յետարդիականութեան այն ժամանակ համոզիչ, ամեն պարագայի գրաւիչ, մտածողութեան մէջ: Հիմա, ChatGPT կը տեղեկացնէ, թէ ֆրանսացի մարդաբանը հեղինակն է ոչ-վայր յղացքին եւ պաստառին վրայ բառացի կը բացատրէ. «In his book «Non-Places: Introduction to an Anthropology of Supermodernity,» Augé defines «non-lieu» as a space that is neutral and lacks individuality, such as airports, highways, or shopping malls. He argues that these spaces are not meaningful in themselves and are only experienced as a means to an end, unlike places which are experienced as an end in themselves and have a cultural and historical significance. According to Augé, non-lieu represents a shift in our relationship to space in the age of globalization and technological advancement.»

Օժէ չհասցուց յայտնաբերել ոչ-վայրի վախճանա-, կամ թերեւս ծննդա-, վայրը, ուր Արիեստական Բանականութիւնը գիտէ իր մասին, եւ քու, եւ անոր, եւ միւսին... մէկ խօսքով՝ հաւաքական մի ոմներու, Ոչ Ոքերու որոնք ոչ մէկ Կիկլոպի ծիծաղը կը շարժեն այլեւս, որովհետեւ ԻՐական են ինչպէս ոչինչամենինչ: Փաստօրէն, համավարակի միեւնոյնաբարութիւնը Օժէի ոչ-վայրերը՝ օդանաւակայան, փապուղի, ամետրակտորոն... ամայացան, եւ միակ ԻՐականը մնաց վիրտուալ գոյութիւնը:

Նոյնն է հիմա յետ-համավարակեան միեւնոյնաբարութիւնը, որովհետեւ այն ժամանակ արտասովոր թուող կացութիւնը արդէն տեսաբանուած է, հակառակ անոր որ նոր նորմալին մէջ ԻՐերը, ներառեալ մարդիՐարածները, պիտի չկարենան ընկալել, կամ ժխտել, նորմալին նորութիւնը:

Պիունկ-Չուլ Հանի Ոչ-Իրեր (Byung-Chul Han, No-cosas. Quiebras del mundo de hoy. Buenos Aires: Taurus, 2021) փորձագրութիւնը իրերու ժամանակաշրջանէն ոչ-իրերու ժամանակաշրջանի անցումին մասին է: Փորձագրութեան կեդրոնական գաղափարը Չուլ Հան կը բանաձեւէ այսպէս. «Իրերը չեն, այլ տեղեկութիւնը որ կ'որոշէ աշխարհը՝ ուր կ'ապրինք»:

Պղատոնին համար իրականը գաղափարներն էին, իսկ նիւթական իրերը՝ անոնց արտացոլումը: Մարքսէն առաջ Ֆեօրպախն է որ Պղատոնը իր ոտքերուն վրայ դրաւ:

ամեն ինչ որ գաղափար է, ըսաւ, նիւթական իրականութեան մը արտացոլումն է պարզապէս: Չուլ Հանի համար իրերը պատուած են տեղեկութեամբ որ հասանելի է որպէս ոչ-վայրային երեւոյթ - ճիշդ է, առայժմ անհրաժեշտ է իրերու տեղեկութեան հասանելիութեան միջնորդող ինչ որ նիւթական սարք, բայց այն ալ իր նուագ ազոյն նիւթեղնութեան պիտի հասցուի շուտով:

Չուլ Հանի փորձագրութեան ընթերցումը յայտնաբերեց բացառիկ առիթը ոչ-իրեր յղացքը թարգմանաբանաձեւելու որպէս ոչ-իր / ոչ իրական / անիրական: Եւ եթէ չկան ԻՐ(ականութիւն), կան միայն անոր մասին տուեալներ, որոնք բազմաթիւ են այնքան որ յիշողութիւնը, ԻՐական, կը պղտորեն, ճշմարտութեան փնտռողը այդ տուեալներով պատում մը, որպէս նոր-ԻՐ, ոչ-ԻՐ, կամ պարզապէս նորարուած տուեալ սարքէլ: Այդպիսով թերեւս հասկնալը Սփիւնքի անԻՐականութիւնը որպէս «Անջրպետի մը գրաւումը»:

Եւ երբ հասկնաւ որ ոչինչ կըրնաս ընել այն միւսին համար որ կարծեցիր որ դուն ես, բայց միայն տուեալներ էին քու մասիդ որպէս ոչ-ԻՐ(ականութիւն), այն ատեն միայն կրնաս մոռնալ «մարդատեաց հոգիդ» եւ բառնալ պաստառին վրայ, ուր գոյութիւնը կը թուայնաւոր պարզ ոչ-քերթուած, մինչեւ որ կորսուի Սեւ Խոռոչի մը անյայտին մէջ, ուր մշտնջենանայ որպէս չգոյի պատում:

«Յետեւաբար ի՞նչ ընել. գրկուի՞նք գեղեցիկ ոչ-ԻՐերու վայելքէն, թե՞ կառչիլ անոնց», գրեցիր այն ոչ-վայրին մէջ:

## ԱՌԱՋԱԻՈՐԱՅ ՊԱՅՔ

Առաջաւորաց պահքը հայ եկեղեցւոյ յատուկ պահեցողութիւն է եւ կը պահուի Սուրբ Սարգիսի տօնին նախորդող Երկուշաբթի օրը՝ տարածուելով հինգ օրերու վրայ: Այսօր, սակայն, հինգ օրերը փոխարինուած են երեք օրերով:

Մեր հաւատքի հօր՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայրապետին վիրապէս ելլելէն եւ Տրդատ Գ. թագաւորին մկրտութենէն ետք, Հայաստան կը դառնայ քրիստոնեութիւնը իբրեւ պետական կրօնք ընդունող առաջին պետութիւնը: Ս. Գրիգոր Լուսաւորիչ Զրիստոսի խօսքը քարոզեց 65 օր շարունակ, որմէ ետք սահմանեց պահեցողութեան ու զոջումի հինգ օրեր, որպէսզի ժողովուրդը նուիրուի քրիստոնեական կեանքին ու մոռնայ իր հեթանոսական սովորութիւնները:



Այսպէս հաստատուեցաւ Առաջաւորաց պահքը, որ հայ եկեղեցւոյ առաջին պահքն է եւ նոյն պատճառով կը կոչուի Առաջաւորաց:

Առաջաւոր կը նշանակէ գլխաւոր կամ առաջին գիծին վրայ գտնուող:


Պահք օրերուն սուրբերու յիշատակում չի կատարուիր: Ոմանք Առաջաւորաց Պահքը կը շփոթեն Ս. Սարգիսի տօնին հետ եւ թիրիմացաբար կը կոչեն Ս. Սարգիսի պահք: Եկեղեցւոյ կանոններուն հիման վրայ սուրբերուն համար պահք սահմանելը օրինական չէ: Յետեւաբար Ս. Սարգիսի նուիրում պահք գոյութիւն չունի: Հակառակ այս իրողութեան, շատերու համար «Առաջաւորաց Պահք» արտայայտութիւնը ծանօթ չէ, անոր փոխարէն պահքը կը վերագրեն Ս. Սարգիս Զօրավարին: Սխալ տարակարծութիւն մը, որ մինչեւ օրս ընդհանրացած է: Շատ հաւանաբար թիրիմացութեան տուն տուող պատճառներն է Ս. Սարգիսի տօնը, որ կը զուգադիպի Առաջաւորաց Պահք Շաբաթ օրը:

Առաջաւորաց Պահքի ընթացքին Ս. Պատարագ չի մատուցուիր: 5-րդ օրը՝ (Ուրբաթ) յիշատակումն է Յովնան մարգարէի քարոզութեան եւ Նիսիւնեացիներու ապաշխարութեան, որ կը նկարագրէ ժողովուրդին դարձը որպէս աղօթքի եւ ծումապահութեան խօսուն օրինակ:

## ՊԱՏԱՆԵԿԱՆ ԱՆԿԻՆ



## ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ



Անի Բերյա Թերզեան

Աշխարհի մէջ ամենատարածուած երեւոյթներէն են ատելութիւնը, պատերազմը, կռիւը, մահը եւ հիւանդութիւնը: Անոնք նաեւ մարդոց նեղացող երեւոյթներն են. վստահ եմ, որ ոչ ոք կը ցանկայ կռիւը, մահը, հիւանդութիւնը եւ այլն:

Բոլորս ալ գիտենք, որ անոնք անխուսափելի երեւոյթներ են, օրենքի վերածուած են կարծեք՝ մարդը քաջ, ինքնավստահ եւ զօրաւոր դարձնելու համար:



Սակայն ես կ'երագեմ աշխարհ մը, ուր բոլորը գիտար կը յարգեն, կը սիրեն եւ աշխարհ մը, ուր չկայ մահ, հիւանդութիւն եւ կռիւ: Կ'երագեմ խաղաղ կեանք մը, առանց պատերազմի, առանց մանուկները որբ դարձնող իրէշներու:

Իմ աշխարհին մէջ հայկական հողերը իրենց բնիկ ժողովուրդով կը ծաղկին,

Նահատակներուն նոր կեանք կը շնորհուի, որովհետեւ անոնք արժանի են բոլորին նման ապրելու:

Իմ աշխարհին մէջ անտունին կը նուիրուի տուն մը, քանի որ բոլոր մարդոց իրաւունքն է ունենալ ապահով, տաքուկ բոյն մը, որբ մանուկներուն կը նուիրուի ընտանիք, որ սեր ու ջերմութիւն վայելեն: Հիւանդներուն՝ բժշկական օգնութիւն:

Մէկ խօսքով՝ եթէ ես ըլլայի տնօրինող ճակատագրին, կը ստեղծէի խաղաղ ու ջերմ աշխարհ մը, ուր բոլորը կրնան հաւասարապէս ուրախութիւն եւ խաղաղ մթնոլորտ վայելել:

## ԻՆՉ ԿՐՍԵՆ ԱՍՏՂԵՐԸ



### Խոյ

Հաճելի անակնկալներ կը սպասեն ձեզի այս շաբաթ: Պաշտօնի բարձրացում եւ եկամուտներու յաւելում պիտի ունենաք:



### Ցուլ

Ժամանակն է մնայուն յարաբերութիւն մը մշակելու: Չուզընկերոջ հետ կարճ հանգիստի մը կարիքը ունիք:



### Երկուորեակ

Խուսափեցէ՛ք նախանձոտ մարդոցմէ, որոնք կը փորձեն խնդիրներ յառաջացնել եւ խաթարել ձեր կեանքը: Նոր սիրային յարաբերութիւն մը պիտի ունենաք:



### Խեցգետին

Ձեր գործերը հեզասահ ձեւով պիտի կատարէք: Նոր ծանօթութիւններ պիտի հաստատէք եւ դրական պահեր ապրիք:



### Առիծ

Ձեր նպատակներուն հասնելու համար շատ խոչընդոտներու պիտի հանդիպիք, սակայն պիտի յաղթահարէք զանոնք ձեր ամուր կամքին եւ աշխատասիրութեան շնորհիւ:



### Կոյս

Այս շրջանի ձեր աշխատանքները բաւական արդիւնաւետ են: Յաջողութեան տանող ճանապարհը փայլուն է եւ նոր պարտաւորութիւններ պիտի ունենաք:



### Կշիռք

Որքան աւելի ընկերասեր ըլլաք, այնքան դիւրին պիտի ըլլայ գործընկերներու հետ լեզու գտնելը: Հաճելի պտոյտ մը պիտի ունենաք:



### Կարիճ

Ժամանակն է նոր գործ մը սկսելու: Բացասական յոյզերն ու յամառութիւնը թող չկործանեն ձեր դրական պահուածքը: Հաստատակամ քայլերով յառաջացէ՛ք ու պիտի յաջողիք:



### Աղեղնաւոր

Բարեյաջող շրջան է նոր յարաբերութիւններ մշակելու: Վերջապէս երջանկութիւնը պիտի թակէ ձեր դուռը եւ ձեր երազները պիտի իրականանան:



### Այծեղջիւր

Լաւագոյն շրջանն է կարճ հանգիստի մը երթալու համար: Անհրաժեշտ է ուշադրութիւն դարձնել ձեր առողջութեան եւ մարզանքի հետեւիլ: Անախորժ յարաբերութեան մը վերջակէտը պիտի դնէք:




### Ձրիս

Պետք է ձերբազատիք ձեզ շրջապատող նախանձոտ մարդոց նախուծընթերէն: Նորանոր գիտելիքներ պիտի ամբարէք եւ բարձունքներու հասնիք՝ ձեր ձիրքերուն շնորհիւ:



### Ձուկ

Մեծ յաջողութիւններ պիտի ունենաք, եթէ ծուլութենէ ձերբազատիք: Սիրոյ մէջ պէտք է նախաձեռնող ըլլաք եւ աշխատանքի ծանրաբեռնուածութենէ չյոգնիք:



Շաղիկ Գաբրիէլեան Սննդագէտ

## ԻՆՉՊԷՍ ՊԵՏՔ Ե ՈՒՏԵԼ ԳԻՐՈՒԹԵԱՆ ԲՈՒԺՄԱՆ ՎԻՐԱՀԱՏՈՒԹԵՆԵՆ ԵՏՔ

Նման վիրահատութիւնները ետք անհրաժեշտ է ուտել աստիճանաբար եւ ընտրել կարգավիճակին համապատասխան ուտելիքներ:

Վիրահատութիւններէն ետք առաջին երկու ամիսներու ընթացքին անհրաժեշտ է հետեւիլ սննդային ցուցմունքներու:

### Առաջին 24-48-ր ժամը վիրահատութենէն ետք

Խմել մաքուր հեղուկներ, որոնք կ'ըլլան թափանցիկ, օրինակ՝ ջուր, բուսական թէյ, խնձորի հիւք եւ թափանցիկ ապուրներ (արգանակ առանց քրտմայի կամ կտորներու), կարելի է ուտել նաեւ դոնդող (ժելո), քանի որ ան մարմինի ջերմաստիճանին ազդեցութեամբ հեղուկի կը վերածուի:



Հեղուկներու օգտագործումը պէտք է ըլլայ աստիճանաբար եւ իւրաքանչիւր անգամ պէտք չէ անցնի կէս գաւաթը: Օրուան մէջ պէտք է սպառել առաւելագոյնը 8 գաւաթ հեղուկ:

### 3-էն 7 օր ետք

Կարելի է ուտել (սպառել) ամբողջական հեղուկներ, թափանցիկ հեղուկներու կողքին, ինչպէս՝ կաթ, մածուկ, օշարակի տեսակներ, ապուրներ (հարուած), pudding, Casterd եւ այլն:

### Մէկէն երկու շաբաթ ետք

Այս ընթացքին կարելի է ուտել քիւրե եղած ուտելիքներ, ինչպէս նաեւ ամէն տեսակի հեղուկներ, բայց նախընտրելի է հեղուկ սնունդը բաժնել պինդ սնունդէն, այնպէս որ հեղուկը պէտք է խմել ուտելէ 15 վայրկեան առաջ եւ ուտելէ 30 վայրկեան վերջ:

### Երկու շաբաթէն մէկ ամիս ետք

Կարելի է ուտել փափուկ, լաւ եփած ուտելիքներ, ինչպէս՝ հաւկիթ, եփած կանաչեղէն եւ փափուկ պտուղներ, առանց կեղեւի: Կարելի է նաեւ ուտել հարուած կովու եւ հաւու միս, օրինակ՝ քիւֆթէ եւ կլոր միս նաեւ լաւ եփած բրինձ:

### Մէկէն երկու ամիս ետք

Սննդականոսին կ'աւելան պինդ ուտելիքներ, ինչպէս՝ հացահատիկներ, հատիկներ, հաց, կանաչեղէն եւ թարմ պտուղներ:



### Երկու ամիս ետք

Ենթական կրնայ ուտել ամէն տեսակ ուտելիք՝ առանց սահմանափակումներու, բայց նախընտրելի են պինդ ուտելիքները բաժնել հեղուկներէն, այսինքն՝ հեղուկները խմել ուտելէն 15 վայրկեան առաջ եւ ուտելէն 30 վայրկեան ետք: Նախընտրելի է նաեւ ուտել փոքր քանակով, սակայն օրական քանի մը անգամ, այսինքն՝ մօտ 5-6 անգամ օրուան ընթացքին:

### Ինչո՞ւ կարեւոր է պինդ սնունդի (ուտելիքի) աստիճանական օգտագործումը վիրահատութենէն ետք

Որպէսզի փորի ցաւ, կամ սրտխառնուք չպատահի: Այս մէկը կ'ապահովէ նաեւ ստամոքսի թթուներու բնական արտազատումը, որպէսզի վիրահատութենէն որոշ ժամանակ ետք մարսողութեան գործընթացը բնական դառնայ:

### Ինչպէ՞ս խուսափի վիրահատութենէն ետք մկանի կորուստէն

Վիրահատութենէն ետք շատ կարեւոր է ստանալ մարմինի օրուան սպիտակուցի կարիքը եւ մկանային մարզանքներ ընել, որպէսզի ծանրութիւնը կայուն չմնայ եւ մկան չկորսնցնէք:

Վիրահատութենէն ետք մարմինը օրուան ընթացքին պէտք ունի 1.1-1.5 կրամ սպիտակուցի իւրաքանչիւր մէկ քլ.-ին համար, այսինքն՝ օրական մօտաւորապէս 60-80 կրամ սպիտակուցի: Սպիտակուցը կրնանք ստանալ կենդանական աղբիւրներէն, ինչպէս՝ հաւկիթէն, միսէն, հաւէն, ձուկէն, կաթնեղէնէն նաեւ բուսական աղբիւրներէ, ինչպէս հացահատիկներէն:

Կարգ մը անձեր հաւանաբար պէտք ունենան բարձր սպիտակուցով սննդային յաւելումներու, որոնք կու գան հեղուկի ձեւով, եթէ վիրահատութենէն ետք անոնք չկարենան ուտել բաւարար չափով պինդ ուտելիքներ:

(Շար. 2)

## Մարզական



Ռաֆֆի Սիլահեան

### ՏԵՂԱԿԱՆ

#### ԼՈՒՐԵՐ ՍՈՒՐԻՈՑ ՄԱՐԶԱԿԱՆ ԿԵԱՆՔԷՆ

-Սուրիոյ ֆութպոլի ախոյեանութեան 10-րդ փուլ մրցումներու շրջագիծին մէջ, Զոմսի մէջ Զարամէ եւ Ճապլէ խումբերուն միջեւ տեղի ունեցած հանդիպումին, որ միկէլ Եւելցուած վայրկեաններուն 0 - 0 հաւասար արդիւնքով կ'ընթանար, իրաւարարը տուգանային հարուած մը տրամադրեց Ճապլէին, որուն հետեւանքով Զարամէի խաղացողներն ու պատասխանատուները բողբեցին եւ մերժեցին շարունակել հանդիպումը: Ֆութպոլի Դաշնութիւնը Կիրակի օր արտակարգ հանդիպումի մը ընթացքին 3 - 0 արդիւնքով պարտական սկստեց Զարամէն եւ պատժական տնօրինումներ սահմանեց խումբի պատասխանատուին եւ կարգ մը խաղացողներուն սկստմամբ: Զալէպի մէջ Իթթիհատը 1-0 արդիւնքով պարտութեան մատնեց Մաճըտը, իսկ Ճէյշը 2-0 արդիւնքով յաղթեց Թալիաային: Իթթիհատն ու Ճէյշը 19 կետով գրաւեցին աղիսակին առաջին դիրքը:




-Իմարաթի մէջ տեղի ունեցած ուսումնամարզական հաւաքին ընթացքին, Սուրիոյ ֆութպոլի երիտասարդական հաւաքականը բարեկամական մրցում մը կատարելով 2 - 1 արդիւնքով պարտութեան մատնեց Չինաստանը: Չոյգ խումբերուն միջեւ տեղի ունեցած առաջին հանդիպումը աւարտեցաւ 1 - 0 արդիւնքով՝ ի նպաստ Չինաստանին:

-Զարամէի պասքէթի տղոց խումբի մարզիչ Ազգամ Զուեյն սրտի տագնապի հետեւանքով տեղափոխուեցաւ հիւանդանոց: Ըստ ակումբին, Ազգամի վիճակը մտահոգիչ չէ, բայց ան հանգիստի կարիք ունի:

### ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

#### ՏԵՄՊԵԼԵՆ ԾԱՆՐ ՎՆԱՍՈՒՄԸ ԿՐԵՑ



Պարսելուայի ֆրանսացի կիսապաշտպան Օսման Տեմպելէն Շաբաթ օր ճիրուկայի հետ տեղի ունեցած հանդիպումին ծանր վնասուածք մը կրելով դուրս եկաւ դաշտէն: Ըստ սպանական AS օրաթերթին, Տեմպելէն մօտ մէկ ամիս պիտի բացակայի խաղերէն: Ակումբի բժիշկներուն համաձայն, Տեմպելէն պիտի բացակայի նաեւ «Իւրոփ-լիկ»-ի 1 - 16 եզրափակիչի Մանչեսթըր Իւնայթըտի գոյգ հանդիպումներէն: Սպանիոյ ընթացիկ առաջնութեան Ֆրանսացի խաղացողը մաս կազմած է 18 հանդիպումի եւ նշանակած է հինգ կոլ: Աւելցնենք, որ Պարսելուան 1 - 0 արդիւնքով պարտութեան մատնեց ճիրուկան:

#### ՆՈՎԱՔ ԾԻՈՔՈՎԻՉ ԱՄՏՐԱԼԻՈՑ ԹԵՆԻՍԻ ԱՆՈՅԵԱՆ ԶԱՆԴԻՍԱՅԱՐ

Կիրակի օր Աւստրալիոյ թենիսի մրցաշարքի ախոյեանութեան աւարտին, սերպ թենիսիս խաղացող Նովաք Ճիոքովիչը իր պատմութեան մէջ 10-րդ անգամ ըլլալով կրցաւ



ձեռք ձգել Աւստրալիոյ ախոյեանութեան տիտղոսը՝ պարտութեան մատնելով յոյն խաղացող Սթեֆանոս Ցիցիպիասը: Երկու ժամ 56 վայրկեան տեւող հանդիպումին, Նովաք կրցաւ յաղթական աւարտել բոլոր փուլերը՝ 6 - 3 / 6 - 7 / 6 - 7 արդիւնքով: Սոյն արդիւնքով Նովաք հաւասարեցաւ սպանացի մարզիկ Ռաֆայել Նատալին, որպէս ամենէն շատ Կրանտ Սլամի մրցանակիր, 22 տիտղոսներով:

#### ԽԱԶԲԱՌ (ՄԽ 425)

Պատրաստեց՝ Մարինա ԶիլԱբօշեան-Պօղիկեան

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1												
2												
3												
4												
5												
6												
7												
8												
9												
10												
11												
12												

#### Ջորիզոնական

1. Ռուբէն Սեւակի բանաստեղծական երկերէն (երկու բառ): Ժխտական Նախածանց:
2. Յոգնակերտ մասնիկ: Զայ երգչուհի:
3. Շուշիի Ս. Ամենափրկիչ եկեղեցին:
4. Ռամկօրէն՝ այր: Անձնական դերանուն:
5. Իրերայաջորդ տառեր: Զայկական աղբիւրներուն մէջ Արաքս գետին տրուած անունը: Ստեղծուած առաջին կիկը:
6. Կրկնուած ձայնաւորներ: Արական անուն:
7. Զացի կամ միսի բրդուած պատառ: 7001: Զայ գուսան:
8. Ձայնաւոր տառեր: Պետական ատեան:
9. Ամուսինը մեռած կին: Խորք:
10. Ճառագայթել: Մարգարէ մը:
11. Ձայնանիշ: Եգիպտական անապատ:
12. Կոմիտասի Նախասիրած երաժշտական գործիքը: Զերծակ:


#### Ուղղահայեաց

1. Պնակալէգ:
2. Զակառակ՝ քաջ: Նշանաւոր որկրամուլը: Տղամարդ:
3. Տառի մը անունը:
4. Ահաւախիկ: Դէ՛հ: Զայկական մականուններու վերջավանկը:
5. Կռթնելու տեղ: Եւս:
6. Տարածքի միաւոր: Զակառակ՝ 304:
7. Զակառակ՝ Լեւոն Շանթի թատերախաղերէն. «..... Մարդը»: Զետեւեալ խօսքի հեղինակին մականունը. «Մեր ուղղութիւնը պարզ էր՝ ծառայել մեր ժողովուրդին, թեթեւցնել նրա կրած ծանր բեռը, բանալ նրա աչքերը, կռուիլ նրա կեղեքողների, խաբողների դէմ: Սակայն կեանքի հրապոյրները մեծ էին, իսկ ազատութեան ճանապարհը փշոտ...»:
8. Սփիւռքահայ երգիչ:
9. Խառնակ վիճակ: Զոս:
10. Զակառակ՝ 6030: Զանգած հրաբխային լեռ Զայաստանի մէջ:
11. Եւս: Շողկապ: Զաղաք, որ կը գտնուի Զայաստանի Արագածոտնի մարզին մէջ:
12. Մեղադրանք: Տարի:

#### ԽԱԶԲԱՌ (ՄԽ 424)

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1	թ	ն	ր	ն	ւ	ր	ն	ւ	լ	ի	ն	
2	ա			ն	ր	ի	ւ					
3	ն	պ	ա	տ	ա	կ		ւ	ա	կ	ա	ւ
4	ա	ի	ն	ա	պ	ւ					տ	ր
5	ք	ծ			ա	ւ	ն	ա	կ		ր	ա
6	ա		ա	ր	ի	ւ	ա			պ	ր	
7	ա	կ	ն		ծ	ք	ն	ի	լ		ա	տ
8	պ		շ			ե	կ				տ	ն
9	ա	հ		ա	ր	կ		ա	ր	ւ	ա	ւ
10	կ	ա	ւ	ր	ջ	ն	լ			ա	կ	
11	ի	ր	ի	ի	ր		ւ	ն	կ	ա	ց	
12		ճ	ա	ն	ա	պ	ա	ր	ի	ի	ն	

ԼՈՒՐԵՐ



## ՀՕՄ-ի «ՏԱԲՈՒԿ ԶԳԵՍ» ԾՐԱԳԻՐԸ ԿԸ ՀԱՐՈՒՆԱԿՈՒԻ

31 Յունուար 2023-ին, ՍՕ Խաչի Շրջ. Վարչությունը իր լուսմին հասցուց ՀՕՄ-ի Զանաատայի միաւորին ներդրումով իրագործուած «Տաքուկ Զգեստ» ծրագիրը, Ազգ. Մանկապարտեզի փոքրիկները եւս օժտելով մարզական հանգստաւետ տարազներով:



Այս ընթացքին հաճելի էր տեսնել մանուկներուն ուրախութիւնը ի



տես տրամադրուած գունագեղ հանդերձանքին:

Աւելցնենք, որ Դեկտեմբերի աւարտին, Ազգ. Միացեալ վարժա-

րանի նախակրթարանի աշակերտութիւնը եւս ստացաւ տաքուկ գազակներ, որոնք պատրաստուեցան

ՍՕ Խաչի աշխատանքէն ներս:

ՍՕ Խաչի Շրջ. վարչութիւնը այս աշխատանքը իրականացուց շնորհիւ ՀՕՄ-ի Զանաատայի միաւորի վարչութեան կատարած հերթական ամենամեայ յատկացումին, ի նպաստ ՀՕՄ-ի Համահայկական ժողովով որդեգրուած «Տաքուկ Զգեստ» ծրագիրին:

## ՀՕՄ-ի «ՏԱԲ ՃԱՇ» ԾՐԱԳԻՐ

2012-ին, ՀՕՄ-ի «Տաք ճաշ»-ի ծրագիրին շնորհիւ, Սուրիոյ պատերազմի օրերուն հայ թէ արաբ բնակիչներուն կը մատուցուէր պնակ մը համեղ ու տաքուկ ճաշ, որպէս օգնութիւն: Գաղթը կը պատրաստուէր ՍՕ Խաչի «Փեթակ» խոհանոցին մէջ եւ կը բաժնուէր ինամատարական Յանձնախումբի ընկերուհիներուն ձեռամբ: Այսօր, յետպատերազմեան շրջանի բազում դժուարութիւնները՝ գաղթը, սղաճը, տնտեսական ծանր վիճակը, սուրիական թողթոսկիի անկումը եւ երկրի տնտեսական շրջափակումը պատճառ դարձած են որ մարդիկ ոչ թէ սնունդի, այլ գուրգուրանքի, տաքուկ բնակարանի, ընտանեկան ջերմութեան, սիրոյ կարիք ունենան:



ՀՕՄ-ի մեծ ընտանիքին մէկ շառաւիղը հանդիսացող Արեւելեան Ամերիկայի Շրջանային Վարչութեան ընկերուհիները այս նուիրեալ աշխատանքին կը լծուին՝ Սուրիոյ իրենց ընկերուհիներուն ձեռք երկարելու եւ նիւթական օժանդակութեամբ ծրագիրին շարունակականութիւնը ապահովելու:

Անոնք ամէն ջանք ի գործ կը դնեն դրամահաւաքի ազնիւ բարերարներէ, որոնք չեն վարակիր իրենց լուման ներդնելու բարեսիրական այս ծրագիրին:

Նուիրատուութեանց մեկնարկը կը կատարուի, այլ խօսքով՝ հունտը կը ցանուի, կաթիլ ամ կաթիլ կը սրսկուի բարերարներու եւ ազնիւ մարդոց լումաներով, ապա բեղմնաւորուած ՀՕՄ-ի Կեդրոնական Վարչութեան ճամբով կը դրկուի ՍՕ Խաչին:

ՍՕ Խաչի անդամուհիները գործի կը լծուին, մեկդի թողած իրենց իսկ դիմագրուած դժուարութիւնները: Անոնք սիրով եւ նուիրական աշխատանքով կը ջանան ժողովուրդի գաւազներուն օգնութեան փութալ՝

ՍՕ Խաչի ընկերուհիները, յատկապէս Շրջանայինի Խնամատար-



րական Յանձնախումբը, մայրական այս գուրգուրանքն է, որ կը ներդնեն իրենց ծառայութեան մէջ ու կը փութան աշխատանքի:

Ժողովուրդին երկար ժամանակի վրայ ծառայութիւն մատուցելը, սակայն, կը կարօտի նիւթական ներդրումի, իսկ Շրջանային Վարչու-

## ՀԱՅ ԾԵՐԱՆՈՅԸ ՆՈՐ ՏՆՕՐԷՆ ՈՒՆԻ

Չորեքշաբթի, 18 Յունուար 2023-ի առաւօտուն, հայ երեք համայնքապետներ՝ Բերիոյ Հայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գեղք. Ս. Մակար Ս. Եպս. Ազգարեան, Բերիոյ Թեմի Կաթողիկէ Հայոց Առաջնորդ Արիի. Ս. Պետրոս Արք. Միրիաթեան եւ Սուրիոյ Հայ Աւետարանական Համայնքի Պետ Վերապա-

Առաջնորդարանի դահլիճէն ներս:

Հանդիպումին, երեք համայնքապետները ընդհանուր առմամբ անդրադառնալէ ետք Հայ Ծերանոցի առաքելութեան, աշխատանքին եւ գործունեութեան, որոշ կետերու շուրջ իրենց մտահոգութիւնները յայտնեցին եւ ինամակալութեան ու տնօրէնութեան թելադրեցին, որ



տուելի Դոկտ. Յարութիւն Սելիմեան, Ազգ. Առաջնորդարանի սրբագան հօր գրասենեակէն ներս, Հայ Ծերանոցի հաշուեքննիչ մարմինին հետ հանդիպում ունեցան, որուն ընթացքին համայնքապետները 2017-2022 հնգամեակին կատարուած աշխատանքին ամնչութեամբ տեղեկացուեցան եւ որոշ հարցերու գծով լուսաբանական պատասխաններ ու բացատրութիւններ ստացան:

Ժիգ ու ջանք չինայն եւ ամէն իմաստով փորձեն Հայ Ծերանոցը իր լաւագոյն վիճակին մէջ պահել ու բարձրացնել, իւրաքանչիւրը իրագէկ իր պարտականութեան եւ համաձայն ներքին կանոնադրին լծուի աշխատանքի եւ իր ծառայութիւնն ու պարտականութիւնը հեզասահ ընթացքով առաջնորդէ՝ ի բարօրութիւն մեր հայ տարեցներուն եւ ի պայծառութիւն Հայ Ծերանոցին:

Երեք համայնքապետները մօտէն ծանօթանալով հաշուեքննիչ մարմինին տարած աշխատանքին, բարձրօրէն գնահատեցին անդամներուն կատարած աշխատանքը պարտականութիւնը եւ իրենց ուրախութիւնն ու գոհունակութիւնը յայտնելով ամենաբարին մաղթեցին, յուսալով, որ նոյն նախանձախնդրութեամբ եւ բծախնդրութեամբ կը շարունակեն իրենց գործունեութիւնը:

Ինամակալութեան անդամները, իրենց կարգին, լսելէ ետք համայնքապետներուն թելադրութիւնները, որոշ բացատրութիւններ տուին իրենց տարած աշխատանքին գծով, ապագայի ծրագիրներուն եւ գործընթացին մասին, յայտնեցին իրենց մտահոգութիւնները եւ պատրաստակամութիւնը յայտնեցին իրենց աշխատանքը լիարժէք կերպով կատարելու:

Այնուհետեւ, երեք համայնքապետները հանդիպում ունեցան նաեւ Հայ Ծերանոցի ինամակալութեան եւ Նորանշանակ տնօրէն Յակոբ Ալապոզանեանին հետ, Ազգ.

Երեք համայնքապետները իրենց հայրական օրհնութիւնները փոխանցեցին ինամակալութեան անդամներուն եւ տնօրէնին եւ յաջողութիւն, օրհնաբեր եւ արդիւնալի ծառայութիւն մաղթեցին անոնց:

հոգատար մայրերու նման:

Շաբաթական հերթական ժողովներուն կը ճշդուին ճաշատեսակները, նախընտրաբար հայկականները, շաբթուան սկիզբը ընթացք կ'առնէ շուկայի աշխատանքը: Խաչուհիները կը ջանան լաւագոյնը յարմար գիներով ձեռք բերել: «Փեթակ» խոհանոցին մէջ ալ օր մը առաջ կը պատրաստուին ճաշին բաղադրիչները: Երեքշաբթի Հինգշաբթի եւ Շաբաթ առաւօտեան կանուխ ժամերէն յանձնախումբի հերթապահ ընկերուհիները եւ ատենապետը կը մտնեն խոհանոց եւ կը սկսին խոշոր կաթասներով ճաշի պատրաստութեան, ետքը մնացած ընկերուհիները կը միանան անոնց: Ծաշը կը լեցնեն պնակներուն, կը տեղադրեն տոպրակներու մէջ եւ մէկ ամ մէկ կը բաժնեն ներկայացող ընտանիքներուն, չմոռնալով տաքուկ ժպիտ մը եւ անուշ խօսք մըն ալ կցել անոնց: Իսկ այն անհատները, որոնք կարողութիւն չունին ներկայանալու,

մեր ընկերուհիները սիրայօժար իրենց բնակարանները կը հասցնեն ճաշը: Եւ այսպէս ո՛չ ցուրտ, ո՛չ տաք օրերուն կը դադրի աշխատանքը: Ամբողջ տարի մը կ'անցնի եւ երբ կը մօտենան տօնական օրերը՝ կը բաշխուին նաեւ տեսակաւոր սննդեղէնի տոպրակներ:

28 Դեկտեմբեր. գարդարուած սեղաններով սրահը կաղանկ կը բուրէր, ներկաներուն ուրախութիւնը ակնյայտ էր իրենց ուղղած երախտագիտական ու ջերմ մաղթանքներէն: Այստեղ են նաեւ ՀՄԸՄ-ի փողերախումբի երիտասարդ եւ երիտասարդուհիներ՝ հարստացնելու մթնոլորտը ծննդեան երգերով ու նուագներով: Ներկաներէն երեք մը կը սկսի երգել ու տրամադրութիւն բարձրացնել: Մամիկներ բարձր կը գնահատեն աշխատանքը այն ՀՕՄ-ուհիներուն, որոնք հեռաւոր ափերէն կը փորձեն մեղմացնել իրենց դժուարութիւնները ու ջերմութիւն պարգեւել: